



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(62)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2022

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ-ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ
ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՆՌԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է արևմտահայերենի և միջին հայերենի լեզվական առնչությունների դիտարկմանը ըղծական եղանակի համակարգում: Արևմտահայերենը դիտարկվում է որպես միջին հայերենի անմիջական ժառանգորդ, և այս առումով ուսումնասիրվում են միջին հայերենում ըղծական եղանակի առաջացման նախադրյալները, կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները, վերջավորություններում կատարված փոփոխությունները, որոնք փոխանցվել են արևմտահայերենին: Զուգահեռ ներկայացվում են նաև գրաբարյան ձևերը՝ որպես ելակետային եզր: Արված դիտարկումները զուգորդվում են բնագրերից քաղված օրինակներով:

Հիմնաբառեր՝ ըղծական եղանակ, ստորադասական եղանակ, բայ, խոնարհում, միջին հայերեն, արևմտահայերեն

Ներածություն

Ըղծական եղանակը, վերջինիս արտահայտած իմաստային բազմազանությունը, կազմության առանձնահատկություններն ու լեզվի պատմական զարգացման ընթացքում կրած փոփոխությունները մշտապես եղել են լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Հետաքրքրական է, սակայն, որ այս եղանակի՝ գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն զարգացման շղթայում ունեցած իմաստի և կազմության քննության հարցերին անդրադարձ գրեթե չի կատարվել: Եղած դիտարկումները դասագրքային են և ամբողջության մեջ չեն ներկայացնում, մասնավորապես, միջին հայերեն-արևմտահայերեն լեզվական համակարգերի սերտ կապը:

Արևմտահայերենի ըղծական եղանակի ձևաիմաստային հատկանիշները ամբողջությամբ վկայվում են միջին հայերենում, որտեղ ձևա-

վորվեց այդ եղանակը գրաբարի սահմանական եղանակի բայածների հիմքի վրա:

Ըղծական եղանակի ձևավորումը և կազմությունը

Գրաբարում աշխարհաբարի ըղծական եղանակի իմաստն արտահայտվում էր հիմնականում ստորադասական եղանակի առաջին և երկրորդ ապառնիների միջոցով: Առաջին ապառնին կազմվում էր ներկայի հիմքից՝ ըստ լծորդության համապատասխան վերջավորություններ ավելացնելով, ինչպես՝ *վազիցես, սիրիցես՝ Ե ձ.*, *նայիցիմ, թռչիցի՝ Ի լծ.*, *կարդայցես, մոռանայցեն՝ ա լծ.*, *թողուցում, լնուցուք՝ ու լծ.*, իսկ երկրորդ ապառնու կազմության համար անցյալի պարզ կամ բաղադրյալ-ցոյական հիմքին ավելանում էին ներգործածն՝ *ից, ցես, ցէ, ցուք, ցիք, ցեն* և կրավորածն՝ *այց, ցիս, ցի, ցուք, ցիք, ցին* վերջավորությունները՝ *շարժեցից, զարմացայց* և այն, ընդ որում՝ *ի* թույլ բաղադրիչ ունեցող բայերի այդ *ի* մասնիկը դառնում էր *է՝ թեայց, փախեայց* և այլն: Բաղադրյալ-ցոյական հիմք ունեցող բայերի *-եաց, -աց* մասնիկների *ց* հնչյունը ավելացվող վերջավորությունների *ց* և *ջ* աֆրիկատների կողքին փոխվում է *ս-ի՝ վազեաց-վազեսջիք, ասաց-ասացես* և այլն, եթե *ց-ն* արմատի հնչյուն չէ կամ բայը միավանկ չէ՝ *հարց-հարցցես, ընթերց-ընթերցջիք* և այլն:

Միջին հայերենում ստորադասական առաջին և երկրորդ ապառնիները աստիճանաբար դուրս եկան կիրառությունից և հնաբանությունների արժեք ստացան, իսկ ստորադասական/ըղծական եղանակի իմաստի արտահայտման հիմնական միջոցներ դարձան գրաբարի սահմանական անցյալ անկատարը և ներկան: Այդ անցման բուն շրջանը թեև դիտարկվում է միջին հայերենը, սակայն գործընթացը սկիզբ է առել գրաբարից, որտեղ սահմանականի համապատասխան ժամանակածները կիրառվում էին ստորադասական ներկայի և անցյալի իմաստներով: «Գրաբարը թեև ստորադասականի ներկա ժամանակը ուներ, բայց ստորադասականի անցյալ անկատարի համար առանձին ձև չուներ, և այդ պակասը լրացնում էր նրա փոխարեն գործածելով սահմանականի անկատարը: Սահմանականի անկատար անցյալը իբրև ստորադասական գործածելու այս ձևը ազդեց նաև ներկայի վրա և շուտով սկսեցին սահմանական ներկան էլ գործածել իբրև ստորադասական ներկա, և սրա հետ նաև իբրև ապառնի, որ հաճախ նույնանում էր ստորադասական ներկայի հետ» (Աճառյան, 1959, էջ 385-386): Սահմանական ներկայի և անկատար անցյալի այսպիսի գոր-

ծածուկությունը միջին հայերենում տարածվեց և ամրակայվեց, իսկ ստորադասական եղանակը ստացավ սահմանափակ կիրառություն՝ որոշակի նպատակով հանդես գալով միայն գրավոր խոսքում: Ըստ Ա. Այտընյանի՝ (1987, էջ 74) է դարից սկսած անկատարի և ներկայի այդպիսի կիրառությունը սովորական է դառնում, և «բուն հին ապառնին կը գործածուի իբրեւ գրաւորական բան մը, զոր ռամիկը կը հասկնար անտարակոյս, բայց չէր ամենեւին գործածեր»: Պետք է նշել, սակայն, որ միջին հայերենի և՛ առաջին, և՛ երկրորդ ենթաշրջաններում կրոնական բնույթի երկերում այս կազմությունները շարունակում էին կիրառվել, ինչպես՝ *Հրամայեաց դարձեալ յԱդամ, թէ՛ Քեզ բուսայի փուշ անպիտան, // Եւ քըրփամբք աշխատանաց դու կերիցես հաց փրփումական* (Երզնկացի, 1962, էջ 223): *Եւ արդ՛ յերեսս անկեալ պաղապեմ ամենեցուն որք օգտիք ի սմանէ, յիշեսջիք անմոռաց զեղկելի զՎարդան վարդապետս* (Այգեկցի, 1998, էջ 72): Կան նաև այնպիսի գրվածքներ, որոնք շարադրված են միջին հայերենին բնորոշ տարրերով, բայց մերթ ընդ մերթ կիրառվում են գրաբարյան առաջին և երկրորդ ապառնիները, այսպես՝ *Մեք զնա չուզեմք, ո՛չ կընդունենք // // Եվ որք զքեզ ոչ ընդունին՝ Իմ հրամանէս բանադրեսցին* (Լեհացի, <https://digilib.ava.am/book/330/335/7016/%D5%8F%D5%A1%D5%B2%D5%A5%D6%80>): Այսինքն՝ սրանք ունեին նաև ոճական դեր և կիրառվում էին երկին գրաբարյան երանգ հաղորդելու նպատակով:

Նախամիջինհայերենյան շրջանում այսպիսի գործածությունը երբեմն նաև եղանակների տարբերակման միջոց էր ծառայում (Այտընյան, 1987, էջ 75), քանի որ սահմանականի տարբեր իմաստներով կիրառությունը շփոթություն էր առաջ բերել: Այս խնդիր լուծվեց *կու/կը* մասնիկի ի հայտ գալով, և «բայերուն մեջ գլխաւոր եւ բուն դժուարին ու կնճեալ մասը կը վերնար լեզուին քերականութեանը մեջէն. որմէ՛ (ներկայի եւ ապառնոյ իրարու խառնակելովը) բնականապէս յառաջ եկած հոմութիւնն ու տարտամութիւնը, թերես քանի մը դար տեւելէն ետքը, վերջապէս կու մասնկան երեսն ելլելովը կը դարմանուէր. (որուն միջոցաւը նորագոյն լեզուն էական ժամանակի մ՛ալ տէր կըլլար, այսինքն ստորադասական անկատարի, որուն մեր գրաբարը միշտ կարօտած էր)....» (Այտընյան, 1987, էջ 100): Այս մասնիկի գործածության առաջին օրինակները թեև վկայված են XII դարից, սակայն հստակ է, որ այն նախորդ դարերում բանավոր խոսքում կիրառություն է ունեցել:

Թեև միջին հայերենի առաջին ենթաշրջանում *կու* մասնիկով կառույցներին զուգահեռ կիրառվում էին նաև գրաբարյան սահմանականի ձևերը՝ համապատասխանաբար ներկայի և անկատար անցյալի իմաստով, երկրորդ ենթաշրջանում սահմանականի համար տիրապետող դարձան *կու-*ով կառույցները, իսկ գրաբարի ձևերում ամրակայվեց ստորադասական/ըղձական եղանակի իմաստը:

Բնագրային օրինակներ.

Խօ՛ջ եար թ՛որանասս դուն զիս, // Սրեղծօղէն զաւալ քեզի գայ. (Քուչակ, 1940, էջ 175): Թէ սուրբ մըրաց նա հանդիպէ՛ // Ամէն լեզու իր վա՛շ ասէ (Շեկ Արրահամ, 1980, էջ 399): Ո՛վ սիրելի եղբայր որ ես, // Ջայս քեզ խրատ րամ, որ լսես, // Յորժամ գրադդ եղանակես, // Ջթուղթն թքով չապականես (Բաղիշեցի, ՈւՄՀԲ¹, 1986, էջ 35):

Կարևոր է նշել, որ մինչ նոր ստորադասական եղանակի ձևավորումը այդ իմաստը փորձում էին արտահայտել *կենալ* բայի և *ու* շաղկապի միջոցով, որոնք միանում էին ներկայի ձևերին, ինչպես՝ *Ու դնեն ի յինք նշան, որ թէ այնէ՛ նա մեռնի, եւ կամ զինք կենդանի թաղեն, ու կամ ի զընդան կենայ ու մեռանի (Ս. Սպարապետ, <https://digilib.aur.am/book/332/-338/7395/>): Իր այլ հնազանդ եպիսկոպոսքն չկենան ի հնազանդել իր եւ կէսն չար կենան ու ասեն՝ ու կէսն բարի, նա չէ պատեի որ ի կասկած թողվի այնհիլայքն (Ս. Սպարապետ, <https://digilib.aur.am/book/>)* Այս կառույցը «իբրև մի վաղանցիկ երևույթ, մրցման մեջ հաղթվեց բուն ստորադասականից (որ սահմանականի ձևն էր) և գործածությունից դադարեց» (Աճառյան, 1959, էջ 388-389): Այսպիսով, գրաբարի սահմանական եղանակի ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը դարձան նոր ստորադասական/ըղձական եղանակի բայաձևեր: Արևմտահայերենը ժառանգեց միջին հայերենում ձևավորված այս նոր եղանակի խոնարհման համակարգը նույնությամբ՝ պահպանելով նաև **վերջավորությունների կրած որոշ փոփոխությունները**: Այսպես՝

Միջին հայերենում փոխվեց *ե* լծորդության բայերի *ներկայի* առաջին դեմքի հոգնակի թվի վերջավորության ձևը՝ *ենք>ենք*: Հ. Աճառյանի (1959, էջ 403) վկայմամբ, երբ խոսակցությունը բուն կիլիկյան ոճով է,

¹ ՈւՄՀԲ համառոտագրությունը այսուհետ կկիրառվի «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.)» գրքից բերված օրինակների համար:

ապա առկա է *նք* և ոչ թե *մք* տարբերակը: Այս փոփոխությունը նկատելի է *ք* կամ *ր* բաղաձայններից առաջ, և «այս դրից մէջ մ հնչութեան նշան է, եւ ն՝ նորութեան՝ ըստ հնախոյզ լեզվագիտաց» (Այտընեան, 1987, էջ 74):

Մ>ն փոփոխությունը ի հայտ է եկել միջին հայերենի առաջին ենթաշրջանից, ընդ որում՝ հեղինակները հաճախ երկու տարբերակներն էլ գործածել են: Երկրորդ ենթաշրջանում արդեն *ն*-ով ձևերը գերիշխող դարձան, ամրակայվեցին և անցան արևմտահայերենին:

Արևմտահայերենում պահպանվել է նաև ներկայի եզակի երրորդ դեմքի *է* հնչյունը՝ ի տարբերություն արևելահայերենի, որտեղ համապատասխան բայաձևն ունի *ի* վերջավորությունը: *է>ի* փոփոխությունը նկատվում է միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում: Այն բնութագրական է Ում ճյուղի բարբառների համար, որտեղից փոխանցվել է արևելահայերենին: Հարկ է նշել, սակայն, որ վաղ աշխարհաբարի շրջանում արևելահայերենում *է*-ով ձևերը դեռևս պահպանում էին իրենց կիրառությունը: Վաղ աշխարհաբարի շրջանում արևելյան բարբառներում տարածված այս փոփոխությունը «կարող է աղերսակցություն ունենալ ե խոնարհման բայերի ժխտական կազմության չեմ մանիլ (=չեմ մանի), չեմ թարկիլ (=չեմ թարկի, չեմ թողնի), չեմ ուտիլ (=չեմ ուտի) ձևերի հետ» («Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», 1972, էջ 394): Այսինքն՝ ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենը ժառանգեց բուն միջին-հայերենյան տարբերակը:

Անցյալ անկապարի հոգնակի առաջին դեմքում ևս նկատվում է *ն* հնչյունի հավելում, որը, ի տարբերություն ներկայի, ավելի ուշ շրջանի երևույթ է. «.... Սահմանական անկատարի եւ կատարեալի մէջ դէմքերու ճշդիւ զանազանութեան համար է եւ միանգամայն միակերպութիւնը պահելու համար: Քանի որ անկատարն ու կատարեալը միեւնոյն ձայնաւոր գրով պիտի սկսին ու լըննան մինչեւ ի վերջ, հարկ էր որ՝ միակերպութեան սկզբանը հաւատարիմ մնալու համար եւ միանգամայն երկու յոքն. դէմքերուն մէջ խտիր մ'ընելու համար տեղ մը գիր մ'աւելցուեր» (Այտընեան, 1987, էջ 78): Հ. Աճառյանը (1961, էջ 19) փաստում է, որ շատ բարբառներում կա *էանք* ձևը, ապա նշում, որ նախ ձայնավորների միակերպությունը չէ որ եղել է, այլ՝ *ն* ռնգայինի հավելումը, որից հետո գործել է ձայնավորների միակերպության օրենքը, և *էանք*-ը դարձել է *էինք*: Այն, որ նախապես եղել է *էանք ձևը*, ապացուցվում է Մ. Սեբաստացու՝ (1727,

էջ 39) արևմտահայերենի քերականության առաջին դասագրքում բերված ներկայի խոնարհման հարացույցը դիտարկելիս՝

կովառեմ կովառենք կովառէի կովառէանք

կովառես կովառէք կովառէիր կովառէիրք

կովառէ կովառեն կովառէր կովառէին:

Այդ վերջավորությամբ ըղծական բայաձևերի՝ միջին հայերենում կիրառության բնագրային օրինակներ ևս պահպանվել են.

Մենք էն Մեղուին հետ կէիեյանք.// Երբ մուրն ընկներ, հա՛յ, հոն պառկէյանք.//Երբ մուրն ընկներ՝ հոն պառկէյանք,// Քաղցր ծաղկունքն ժողովէյանք,// Քաղցրաճաշակ մեղր շինէյանք,// Եւ մոմն Աստուծոյ, հա՛յ, փէշքաշ փայանք (ՀՄԺԵ. 1956, էջ 296)²: -Թագու՛ր, յամէ՛, կի՛ջ կիւրեյայ,// Որ քոյ ծառին, հայ գովքն ասէյանք (ՀՄԺԵ, 1956, էջ 290):

Էանք վերջավորությամբ բայաձևերի կիրառության օրինակներ շատ քիչ կարելի է գտնել: Դրանք գործածականությամբ և տարածվածությամբ անհամեմատ քիչ են, քան էինք-ով ձևերը, որոնք առաջ եկան ձայնավորների միակերպության օրենքով պայմանավորված և լեզվի զարգացման ընթացքին համահունչ լինելով՝ տարածվեցին ու ամրակայվեցին՝ փոխանցվելով արևմտահայերենին:

Էանք>էինք ձևի միջոցով կարելի է բացատրել նաև ա խոնարհման այաք>այանք>այինք փոփոխությունը:

Ըղծական եղանակի խոնարհման վերջավորություններից դուրս է ընկել նաև յ ձայնակապը: «Դիմային վերջավորությունից առաջ երևացող Ի-ն կորցրել է նախնական հնչյունական արժեքը և դարձել զուտ տառագրական նշան» (Կարստ, 2002, էջ 292): Ա լծորդության բայերի հոգնակի երկրորդ դեմքի -այք վերջավորությունը այ երկբարբառի պարզեցմամբ դարձել է -աք, իսկ եզակի երրորդ դեմքի -այր վերջավորությունը՝ -ար: Միջին հայերենի առաջին ենթաշրջանում գործածվել են

² ՀՄԺԵ համառոտագրությունը այսուհետ կկիրառվի «Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր» գրքից բերված օրինակների համար:

և՛ / ծայնակապով, և՛ առանց դրա տարբերակները³, իսկ երկրորդ ենթաշրջանում ամրակայվում են նոր ձևերը և փոխանցվում արևմտահայերենին⁴: Հարկ է նշել, որ արևմտահայերենը պահպանել է / հնչյունի գրությունը ներկայի եզակի երրորդ դեմքում: Նույն կերպ պահպանվել է նաև *ե* և *ի* լծորդության բայերի անցյալ անկատարի է-ով գրությունը՝ *գրէի, գրէիր* և այլն:

Ներկայացնենք բայական տարբեր վերջավորություններով բայաձևերի կիրառության բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

Դառն ու ողորմ ինք մընացել, // Թէ յերբ հասնենք մեր մուրաբին, (Ֆրիկ, 1937, էջ 167): **խնդամք** ամէն շուրջ կարասիս, // **խորովենք** հաւ, սագ, ոչխոր միս, // Ծաղկունք **բերենք** մէջ ժողովիս. // Աւերիս փամ Հայոց ազգիս (Խարասարցի, ՈւՄՀԲ, 1986, էջ 146): Ծոցիկդ Ադամ, այ դըրախտ, // մըլտնէի խընծոր **քաղէի** (Քուչակ, 1940, էջ 273): Ղսուրաթն այլ ի դէմ հրեր՝ «Թող **պագնէ՛** որ չելնէ հոգին» (Քուչակ, 1940, էջ 302):

Արևմտահայերեն

Խօսքդ մորճիկ ըլլայ թող // ըլլայ փայտ ու գերան երդիկ ու // անտառ որ ծնինք (Պըլլտեան, 2010, էջ 603): Պիտի այնպէս **կարգադրէի** գործերը, որ սինէմայի փոմասկի պոչին մէջ քով քովի **գտնուէինք**, յետոյ շարժանկարի սրահին մէջ իրար քով **գայինք** (Բապիկեան, <https://granish.org/kagahandi-heqiat/>): Այն ապեն Թի Վի իսկ չկար, բայց // Տային կար // **ուզէինք** անգամ՝ չէինք կրնար // ձանձրանալ (Թեքեան, <https://granish.org/erku-pattshar-aprelu/>): Թող արցունքս դողահար հողդ **թեթևցնէ** (Վ. Թեքեան, <https://granish.org/oror-eritss-nahatakneruu/>): Անշուշտ վստահ եմ, եթէ մայրս օր մը օր մը այս յարկաբաժինը **տեսնէ**, շուտով ինք ալ

³ Յու. Ավետիսյանը (2021, էջ 246) իրավացիորեն նկատել է, որ այնքան էլ ճիշտ չէ ստորադասական/ըղձական եղանակի անցյալի եզակի երրորդ դեմքից կազմվող սահմանականի անկատար անցյալի համապատասխան բայաձևի մասին «Հայոց լեզվի պատմություն» (Դիլբարյան, Աբաջյան, Յուզբաշյան, 2017) աշխատության մեջ բերված այն պնդումը, թե այս բայաձևերի համար միակ գործածական վերջավորությունը -այր ձևն էր:

⁴ Վերջավորությունների քննությանը մենք մանրամասն չենք անդրադառնա, քանի որ այս հարցի համապարփակ վերլուծությունը ներկայացրել է Յու. Ավետիսյանն իր «Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները սահմանական եղանակի համակարգում. Անկատար ներկա և անկատար անցյալ» հոդվածում (2021, էջ 241-242, 245-246):

հոգեբույժի պէտք պիտի ունենայ (Բադիկեան, ՄԵ⁵, 2018, էջ 12) : Բայց ինչպէ՞ս կրնաս խօսիլ եթէ **չըլայ**// եթէ **ըլլայ**// միայն պարզեալ սրարձակումը քաղաքին մշուշին մէջ (Պըլլիտեան, 2010, էջ 50):

Կատարված փոփոխությունները առավել ակնառու դարձնելու համար ներկայացնենք վերջավորությունների ամբողջական պատկերը գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում:

Իմաստային բնութագիր: Գրաբարում ստորադասական եղանակն առաջ էր բերում իմաստային բազմազանություն: Միջին հայերենում բազմիմաստության հատկանիշը ժառանգեց նաև ներկայով և անկատար անցյալով կազմվող նոր ըղձական եղանակը: Այսպես, գրաբարում ստորադասական եղանակը կիրառվում էր ըղձական, պայմանական, հարկադրական և սահմանական եղանակների իմաստներով: Միջին հայերենում ստորադասական/ըղձական եղանակը ևս ուներ պայմանականի, սահմանականի, ըղձականի իմաստներ, ինչպես՝

Յայնժամ լինի այն մեզ նշան, // Որժամ խմեմ զլի շիշան... (Երզնկացի, 1962, էջ 165): Հաւերտ գան քաղցր ծայնով, // Ծիծեռն ի հետ սաղմոսելով, // Գայ արտուտիկըն՝ կարդալով. Չառաւօտուն է բարբառել (Երզնկացի, 1962, էջ 118):Շատ ողբաս՝ թէ տաս գիս, զի աղբով ծածկեսցեն զանգին մարգարիտս իմ (Այգեկցի, 1998, էջ 74): Եթէ լինի այսպէս, որ հանդիպիմ քեզ, // Ընդ քո սուրբ երեսիդ յոյժ կարոտ եմ ես (Սոնկեցի, ՈւՄՀԲ, 1986, էջ 223):

Լեզվի պատմական զարգացման ընթացքում ի հայտ եկան պայմանականի, հարկադրականի նոր ձևեր: Ըղձական եղանակը կորցրեց նախկին բազմիմաստությունը և սկսեց կիրառվել արդի հայերենի ըղձական եղանակի իմաստով: Այսինքն՝ ըղձական եղանակի մենիմաստացման գործընթացը, սկիզբ առնելով միջին հայերենից, վաղ աշխարհաբարի շրջանում ամբողջացավ և փոխանցվեց արևմտահայերենին: Եվ, ի տարբերություն միջին հայերենի, արևմտահայերենում այս եղանակն արտահայտում է միայն ըղձական եղանակի իմաստ:

Բնագրային օրինակներ արևմտահայերենից.

⁵ ՄԵ համառոտագրությունը կկիրառվի «Մետաղէ երազներ» գրքից բերված օրինակների համար:

Եթէ անօթի չըլլայի, դժուար թէ ի վերջոյ որոշէի գործ փնտրել, դժուար թէ այս սրճարանը գայի, հետեւաբար՝ դժուար թէ Մարիին հանդիպէի (Բաղդիկեան, ՄԵ, 2018, էջ 25): Ականջիս մօտիկ// սրընթաց շօշափ ծովամայրի// անխուսափելի վերահաս// արգելող որ նայիմ// կրկին (Պըլլիեան, 2010, էջ 448): Կրա՛կ էր պէտք որ Երկիրս ո՛չ թէ// այրեր՝ ապրե՛ր,// Յորդեցավ Սոման ու ամբոխը ըմպեց (Թեքեան, <https://granish.org/vehanush-teqeyan-eghishe-charenc/>):

Ստորադաս⁶ նախադասության մեջ կիրառվելիս ըղձական եղանակի բայաձևերը ցույց են տալիս պայմանականորեն կատարելի գործողություն, իսկ անկախ նախադասության մեջ՝ փափագելի գործողություն (Չոլաքեան, 2019, էջ 61) : Ընդ որում՝ երկրորդ ձևին կարող են միանալ թող⁷, երանի բառերը: Այդ բառերը ստորադասական/ըղձական իմաստի շեշտման դեր են կատարում:

Ըղձական իմաստի շեշտման նպատակով ըղձական եղանակի բայաձևերի՝ թէ⁸, երբ, եթէ, թող և այլ շաղկապների ու եղանակավորող բառերի հետ կիրառությունը արևմտահայերենը նույնպես ժառանգել է միջին հայերենից: Միջին հայերենում այս բառերը դարձան ըղձական/ստորադասական եղանակին «առընթեր» կիրառվող ձևեր, մինչդեռ գրաբարում դրանք նաև տարբերակիչ դեր ունեին, քանի որ գրաբարի ստորադասական եղանակը կիրառվում էր նաև սահմանական, հարկադրական և պայմանական եղանակների իմաստներով, իսկ միջին հայերենի երկրորդ և վաղ աշխարհաբարի շրջաններում առանց այդ բառերի, մասնիկների կիրառության դրսևորվում էր բայաձևի՝ ստորադասական/ըղձական եղանակի լինելը:

Բնագրային օրինակներ.

Միջին հայերեն

⁶ Այս եղանակը, արևմտահայերենում ստորադաս նախադասություններում հաճախակի հանդես գալով, կոչվել է նաև ստորադասական եղանակ:

⁷ Թող բառի հետ կիրառությունը հաճախ պատճառ է դարձել արևմտահայերենի քերականություններում առանձին ըղձական և ստորադասական եղանակների տարբերակման համար: Թող եղանակավորող բառի գործածությունը նկատի ունենալով՝ Հ. Գազանճյանը տարբերակում է ըղձական և ստորադասական եղանակներ. «Ըղձական ներկայ և անկատարը ստորադասականի ձեռ ունին, միայն սկիզբը կ'աւելցուի թող մասնիկը, որուն վրայ շեշտ կը դրուի» (Գազանճեան, 1913, էջ 68):

⁸ Թէ կամ եթէ շաղկապների հետ ստորադասականի կիրառությունը նկատի ունենալով՝ Հ. Աճառյանը առանձնացնում է թեական եղանակ (Աճառյան, 1961, գիրք Բ, էջ 241):

Թէ այլվի ի յիս դառնաս ու կենաս խելացոյ ի վերայ.// Երթամ բարկ արև դառնամ, գամ կանգնիմ ի կամարիդ վրայ (Քուչակ, ՀԲ, էջ 138): Մէկ պահու սէրն ի սրբոյն.// Թող լինի ինձ յառաւօտուն. (Երզնկացի, էջ 126): Գամ մըլտնում ու վարդ քաղեմ, թող հոգեկս ի տեղըն ելնու (Քուչակ, ՀԲ, էջ 141): Այս ամեն թող գա ու անցնի, Այս զոր ասացի ի վնաս իմ ազգի (Ֆրիկ, էջ 153): Աստուած թող շէն պահէ զկաճայ (Խարասարցի, ՈւՄՀԲ, էջ 170):

Արևմտահայերեն

Թող բազմոց ըլլայ տարբերութիւն չ'ըներ (Բապիկեան, ՄԵ, 2018, էջ 102): Թող համրանամ// որ յայտնուիք// անհետանամ// բառերեն տակ// ձե՛զի պէս// ձե՛զի հետ (Պըլտեան, 2010, էջ 610): Լեռներ հաւանական// լռին շարահիստութիւն աստղերու// կոթողուած// որ քայլերս հապեն// չունին ձայն// եթէ համրանամ (Պըլտեան, 2010, էջ 413):

Արևմտահայերենում խոսակցական լեզվում կիրառվում է նաև *նէ* եղանակավորող բառը, որը նույնպես արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենից: Ըստ Հ. Աճառյանի (1961, էջ 242) *նէ*-ն առաջացել է *նայ/նա* բառից, որը «կարելի է արդի լեզվով թարգմանել «ուրեմն, ապա ուրեմն» բառերով»: «Ընտաքքրական է, որ միջին հայերենի բառարանում (Ղազարյան, Ավետիսյան, 2009, էջ 565, 572) նշվում են *ն' նայ*, *ն' նէ* բառերը՝ *նէ- եթէ, նայ- 1. ավաղ, 2. բայց, սակայն*: Միջին դարերում այս երկու բառերի կիրառությունը ևս նկատելի է, ինչպես՝

Արեկ որ խըրապ մի տամ, խելք ու միտք ունիս **նա** լըսէ՛ (Քուչակ, 1940, էջ 356): Հա՛յ իմ խաղաղիկ հարսնուկ, դուրս կ'ելլես՝ գօտիդ մի կապեր.// Կապես ալ **նէ՛** թուկ կապէ, որ հովը տարութեր անէ, (Քուչակ, 1940, էջ 472): Հառաչեմ **նայ** կուգայ արիւն՝ աղուորին իր շար արեւուն (Քուչակ, 1940, էջ 240):

Այս դեպքում ստացվում է, որ միջին հայերենում առանձին եղել են *ն' նէ*, *ն' նայ* բառերը բառարանում բերված համապատասխան իմաստներով կամ *նայ* ձևը *այ>է* հնչյունափոխության արդյունքում դարձել է *նէ* և կորցրել նախնական իմաստը: Մ. Աբեղյանը փաստում է, որ *նայ* ձևը կիրառվել է պայմանական, թեական իմաստ հաղորդելու նպատակով: Հատկանշական է լեզվաբանի այն դիտարկումը, թե *նայ*-ի փոխարեն բարբառային ձևերում կարող էր դրվել նաև *կոյ* բառը, այսինքն՝ այն նաև եղանակատարբերակիչ դեր է կատարել և տարբերակել ստորադասական/ըղձական եղանակը սահմանական եղանակից, ասել է թե պայմա-

նականորեն կատարելի, բաղձալի գործողության իմաստը՝ հաստատապես կատարվող գործողության իմաստից: Եվ «երբ կու մասնիկն առաջացած տարածվում է, բնականորեն բռնում է վերջադաս գլխավոր խոսքի սկզբում դրված «նայ» բառի տեղը, այն ժամանակ սրա ֆունկցիան ավելորդ է դառնում. ուստի և այդ «նայ» բառը կա՛մ դուրս է ընկնում, կա՛մ արտասանությամբ միանալով առաջադաս խոսքերի հետ՝ դառնում է մի շատ սովորական մասնիկ պայմանական և նման խոսքերի համար» (Աբեղյան, 1965, էջ 324):

Նէ-ի գործածությունը արդի գրական արևմտահայերենում թեև հանձնարարելի չէ, այնուամենայնիվ, գեղարվեստական գրականության մեջ կիրառության օրինակներ գտել ենք՝ *Պոռայ նէ՛ չեն լսեր (Բարիկեան, ՍՀԿԱ, 2018, էջ 17)*⁹, *Չեմ կրնար, վոնտէ՛, չէ նէ պիտի մեռնես (Բարիկեան, <https://granish.org/christian-batikean-the-summer/>): Վերերէն բան մը հյնայ նէ՛ քարի պէս է, կը ջարդե (Թեքեան, 2020, էջ 29-35) :*

Եզրակացություն

Այսպիսով, արված վերլուծություններից, բերված բնագրային օրինակներից ելնելով՝ կարող ենք ևս մեկ անգամ ընդգծել, որ արևմտահայերենի ըղձական եղանակի ձևաիմաստային յուրահատկությունները գերազանցապես փոխանցվել են միջին հայերենից, որտեղ ձևավորվեց այդ եղանակը գրաբարի սահմանական եղանակի բայաձևերի հիմքի վրա: Միջին հայերենում փոփոխությունների ենթարկվեցին, ապա նույնությամբ արևմտահայերենին փոխանցվեցին նաև ըղձական եղանակի բայաձևերը կազմող վերջավորությունները:

Միջին հայերենում գրաբարի ստորադասական եղանակի բայաձևերի բազմիմաստության հատկանիշը ժառանգեց ներկայով և անկատար անցյալով կազմվող նոր ըղձական եղանակը, սակայն լեզվի պատմական զարգացման ընթացքում նոր եղանակաձևերի կազմությունը հանգեցրեց ըղձական եղանակի մենիմաստացմանը:

Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները համակարգային են, և դրանց վերհանումը կնպաստի արևմտահայերենի լեզվական

⁹ ՍՀԿԱ համառոտագրությունը այսուհետ կկիրառվի «Սուփըր հերոսները կը մեռնին ամրան» գրքից բերված օրինակներ համար:

կառուցվածքի շատ առանձնահատկությունների բազմակողմանի ուսումնասիրությանը և ներկայացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

REFERENCES

1. «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 496 էջ: «Aknarkner mijin grakan hayereni patmowt'yan», հ. A, Haykakan SSH gitowt'yownneri akademiayi hrat., Er&an (in Armenian)
2. Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Յուզբաշյան Ա., Հայոց լեզվի պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2017, 444 էջ: Abajyan A., Dilbaryan N., Yowzbashyan A., Hayoc lezvi patmowt'yown, EPH hrat., Er&an, 2017 (in Armenian)
3. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Միտք, Երևան, 1965, 699 էջ: Abeghyan M., Hayoc lezvi tesowt'yown, Mitq, Er&an, 1965. (in Armenian)
4. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Ա, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1959, 593 էջ: Atwar'yan H., Liakatar qerakanowt'yown hayoc lezvi, h. 4, girq A, HSSR' GA hrat., Er&an, 1959. (in Armenian)
5. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1961, 543 էջ: Atwar'yan H., Liakatar qerakanowt'yown hayoc lezvi, h. 4, girq B, Er&an, HSSR' GA hratarakchowt'yown, 1961. (in Armenian)
6. Այգեկցի Վ., Գիրք հաստատութեան եւ արմատ հաւատոյ, Երևանի համալս. հրատ., Երևան, 1998, 448 էջ: Aygekci V., Girq hastatowt'ean ew armat hawatoy, Er&ani hamals. hrat., Er&an, 1998. (in Armenian)
7. Այտընեան Ա., Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1987, 866 էջ: Ayt'nean A., Qnnakan qerakanowt'iwn ashxarhabar kam ardi hayere'h lezowi, Er&ani hamalsarani hratarakchowt'yown, Er&an, 1987. (in Armenian)
8. Ավետիսյան Յու., Հայագիտության զուգահեռականներում, ԵՊՀ հրատ, Երևան, 2021, 340 էջ: Avetisyan Yow., Hayagitowt'yan zowgaher'akannerowm, EPH hrat, Er&an, 2021. (in Armenian)
9. Բատիկեան Բ., Մետաղէ երազներ, Ինքնագիր գրական ակումբ, Երևան, 2018, 177 էջ: Batikean Q., Metaghe' erazner, Inqagir grakan akowmb, Er&an, 2018. (in Armenian)

10. Բատիկեան Ք., Սուփրը հերոսները կը մեռնին ամրան, Ինքնագիր գրական ակումբ, Երևան, 2018, 126 էջ: Batikean Q., Sowp'y'r herosnery' ky' mer'nin amran, Inqragir grakan akowmb, Er&an, 2018. (in Armenian)
11. Գազանճեան Յ., Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի. միջին դասընթացք, Պ. Պալենց գրատան հրատ., Կ. Պոլիս, 1913, 238 էջ: Gazantwean Y., Nor qerakanowt'iwn ardi hayere'n lezowi. mijin dasy'nt'acq, P. Palenc gratan hrat., K. Polis, 1913. j (in Armenian)
12. Երզնկացի Կ., Տաղեր, աշխատասիրությամբ՝ Ա. Սրապյան, ՀՍՍՌ ԳԱԱ հրատ., Երևան, 1962, 297 էջ: Erznkaci K., Tagher, ashxatasirowt'yamb՝ A. Srapyan, HSSR՝ GAA hrat., Er&an, 1962 (in Armenian)
13. Թեքեան Վ., Ուրեմն պատմութիւն կ'ուզես // «Բագին», 2020, թիւ 2, էջ 29-35: T'eqean V., Owremn patmowt'i'wn k'owzes // «Bagin», 2020, t'iw 2, (in Armenian)
14. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Երևանի համալս. հրատ., Երևան, 2002, 412 էջ: Karst Y., Kilikyan hayereni patmakan qerakanowt'yown, Er&ani hamals. hrat., Er&an, 2002.(in Armenian)
15. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, կազմ.՝ Աս. Մնացականյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1956, 671 էջ: Haykakan mijnadaryan jhoghovrdakan erger, kazm.՝ As. Mnacakanyan, HSSR՝ GA hrat., Er&an, 1956. (in Armenian)
16. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, 840 էջ: Ghazaryan R., Avetisyan H., Mijin hayereni bar'aran, EPH hrat., Er&an, 2009. (in Armenian)
17. Մխիթար Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց, տպ. Անտոնի Բորտոլիի, Վենետիկ, 1727, 149 էջ: Mxit'ar Sebastaci, Dowr'n qerakanowt'ean ashxarhabar' lezowin hayoc, tp. Antoni Bortolii, Venetik, 1727. (in Armenian)
18. Շեկ Աբրահամ // Հայ միջնադարյան հանելուկներ, (V-XVIII դդ.), կազմող Մնացականյան Ա. Շ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980, 522 էջ: Shek Abraham // Hay mijnadaryan hanelowkner, (V-XVIII dd.), kazmogh Mnacakanyan A. Sh, HSSH GA hrat., Er&an, 1980. (in Armenian)
19. Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVII դդ.), հ. 1, աշխատասիրությամբ Հ. Սահակյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986, 755 էջ: Owsh mijnadari hay banasteghc'owt'yowny' (XVI-XVII dd.), h. 1, ashxatasirowt'yamb H. Sahakyan, HSSH GA hrat., Er&an, 1986.(in Armenian)
20. Չոլաքեան Յ., Արեւմտահայերէն. կանոնակարգ եւ խնդիրներ, գիրք Բ, Ասողիկ, Երևան, 2019, 152 էջ: Cholaqean Y., Arewmtahayere'n. kanonakarg ew xndirner, girq B, Asoghik, Er&an, 2019. (in Armenian)

21. Պըլտեան Գ., Մանտրաներ, Սարգիս Խաչենց-Փրինթինֆո, Երևան, 2010, 621 էջ: Py'ltean G., Mantraner, Sargis Xachenc-P'rint'info, Er&an, 2010. (in Armenian)
22. Քուչակ Ն., Հայրէններու բորաստանը, առաջարան՝ Ա. Չօպանեան, Հ.Բ.Ը. Միութեան հրատ., Փարիզ, 1940, 550 էջ: Qowchak N., Hayre'nnerow bowrastany', ar'ajaban` A. Cho'paneian, H.B.Y'. Miowt'ean hrat., P'ariz, 1940. (in Armenian)
23. Ֆրիկ, Ժողովածու, Պետհրատ, Խմբագիրներ՝ Հ. Պետրոսյան, Տ. Խաչվանքյան, Երևան, 1937, 208 էջ: Frik, Jhoghovac'ow, Pethrat, xmbagirner` H. Petrosyan, T. Xachvanqyan, Er&an, 1937 (in Armenian)
24. <https://digilib.aua.am/book/330/335/70>
25. <https://granish.org/erku-pattshar-aprelu/>:
26. <https://granish.org/kagahandi-heqiat/>:
27. <https://granish.org/oror-eritss-nahatakneruu/>:
28. <https://granish.org/vehanush-teqeyan-eghishe-charenc/>:
29. <https://granish.org/christian-batikean-the-summer/>
30. <https://digilib.aua.am/book/332/338>.
31. <https://digilib.aua.am/book/332/338/7395/>

НРАНЕ САРГСЯН - СВЯЗИ СРЕДНЕАРМЯНСКОГО И ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКОВ В СИСТЕМЕ ЖЕЛАТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ

Ключевые слова: желательное наклонение, подчинительное наклонение, глагол, спряжение, средний армянский язык, западный армянский язык

Анализ языковых систем среднеармянского и западноармянского языков показывает, что западноармянский язык унаследовал многое от среднего армянского. Исследование желательного наклонения подтверждает, что формальные и семантические особенности западноармянского языка полностью перешли из среднеармянского языка, в котором было сформировано это наклонение на основе глаголов изъявительного наклонения грабара. Окончания глаголов желательного наклонения также были изменены в среднеармянском языке. Эти окончания с точностью перешли в западноармянский язык. В историческом развитии языка формирование новых форм наклонения произошло в процессе монотеизации желательного наклонения. Этот процесс монотеизации, начиная со среднего армянского языка, в ранний период новоармянского языка был обобщен, затем перешел в западноармянский язык. Глаголы этого наклонения применяют թէ (что), երբ (когда), եթէ (если), թող (пусть) с модальными

словами, чтобы подчеркнуть желательное значение. В западноармянском разговорном языке также используется модальное слово *իւ՛ի*, которое перешло в западноармянский язык со среднего армянского. Использование *իւ՛ի* не рекомендуется в современном литературном западноармянском языке.

NRANE SARGSYAN - MIDDLE ARMENIAN-WESTERN ARMENIAN TRANSITIONS IN OPTATIVE MOOD

Keywords: *optative Mood, Subjunctive mood, verb, conjugation, Middle Armenian, Western Armenian*

The examination of the language systems of the Middle Armenian and Western Armenian languages shows that Western Armenian inherited many realities from Middle Armenian. The study of optative mood confirms that the formal and semantic characteristics of Western Armenian coincide with that of Middle Armenian, where this mood was formed on the basis of the verbs of the indicative mood of Grabar. The endings of the verbs of optative mood were changed in Middle Armenian, then they were transferred to Western Armenian. The polysemy of verbs of subjunctive mood of Grabar was also inherited by the new optative mood, formed by the present and imperfect past in Middle Armenian. However, in the course of the historical development of the language, the formation of new resulted in monosemantic optative mood. This process of monosemantization started from the middle Armenian language. It was generalized in the early period of the New Armenian language and then transferred to the Western Armenian language. The verbs of operative mood are used with *թէ* (that), *երբ* (when), *եթէ* (If), *թողի* (let) and other connectives and modal words in order to emphasize the optative meaning. The word *իւ՛ի* is used in the Western Armenian spoken language. It was also transferred to Western Armenian language from Middle Armenian. The use of *իւ՛ի* is not recommended in modern literary Western Armenian.

Ներկայացվել է՝ 24.09.2022

Գրախոսվել է՝ 09.11.2022